Հաստատված է
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի
2009թ. սեպտեմբերի 24-ի թիվ 3 նիստում
Գիտ. խորհրդի նախագահ
տնօրեն Ս. Ա. Առաքելյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. 1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի Անվտանգության ծառայությունն իր գործառությունները իրականացնում է մասնաճյուղի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և ՀՀ օրենսդրության համապատասխան:
1. 2. Անվտանգության ծառայությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ:

2. Անվտանգության ծառայության խնդիրները

2. 1. Կազմակերպել և հսկողություն իրականացնել մասնաճյուղի և հարակից տարածքներում հասարակական կարգի, օրինականության և նյութական արժեքների պահպանության կապակցությամբ:
2. 2. Հետևում է ուսանողների, աշխատակիցների և այլ քաղաքացիների կողմից մասնաճյուղի ուսումնական և վարչական տարածքներում ներքին կարգապահական կանոնակարգով նախատեսված վարքագծի պահպանության նկատմամբ: Հսկում և կարգավորում է մասնաճյուղի տարածքում ավտոտրանսպորտային միջոցների շարժի և պատշաճ կայացման գործընթացի նկատմամբ:
2. 3. Կազմակերպում և հսկողության տակ է պահում մասնաճյուղի գիշերապահների և դռնապահի ամենօրյա գործունեությունը: Ծառայության ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունները ստորաբաժանման միջոցներով և ուժերով անմիջապես վերացվում են, իսկ առանձին բարդ հարցերի կապակցությամբ դիմում են տնօրինությանը:
2. 4. Մասնաճյուղի մյուս առանձին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպում է ուսումնական գործընթացի անխափան և անվտանգ իրականացումը: Օրինականության նորմեր խախտած անձանց

կարգի է հրավիրում, իսկ այդպիսի պահանջներին չենթարկվողների վերաբերյալ ահազանգվում է տարածքային ոստիկանության բաժին համապատասխան իրավական միջոցառումներ իրականացնելու համար:

2. 5. Կազմակերպում է մասնաճյուղի և նրա հյուրանոցային մասնաշենքի նյութական արժեքների պահպանությունը: Ձեռնարկում է միջոցառումներ այդ գործընթացի մեջ տեղ գտած թերությունները վերացնել ուղղությամբ և այդ մասին նախապես տեղյակ պահում տնօրինությանը:

3. Անվտանգության ծառայության կառուցվածքը

3. 1. Անվտանգության ծառայությունը ամենիջականորեն ենթարկվում է մասնաճյուղի տնօրինությունը:

3. 2. Անվտանգության ծառայությունը ղեկավարում է նրա ղեկավարը, ում աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է մասնաճյուղի տնօրենը:

3. 3. Անվտանգության ծառայության կառուցվածքի մեջ մտնում են նրա ղեկավարը, պահակապետը, 5 գիշերապահները և դռնապահը:

3.4. Անվտանգության ծառայության ղեկավարը՝

ա/ կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է ծառայության գործունեությունը

բ/ կատարում է աշխատանքի բաժանում ծառայության աշխատողների միջև,

գ/մասնակցում է մասնաճյուղի տնօրենի կողմից հրավիրված նիստերին, խորհրդակցություններին և քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնում եզրակացություններ:

3.5. Անվտանգության ծառայության ղեկավարը պատասխանատու է ծառայուտյան կողմից իրականացվող աշխատանքների որակի և արդյունավետ լուծման համար: